

«Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/1

16 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Արա Մանուկյանի ներկայացուցչի 06.11.2014 թ-ի բողոքը «ՖՆ ԱՄՄՁՄ մաքսատան 27.10.2014 թ-ի մերժման եզրակացության վերաբերյալ:

Արա Մանուկյանի ներկայացուցչի բողոքում բերված փաստարկները.

Արա Մանուկյանը (այսուհետ նաև բողոքաբեր) ս.թ. հոկտեմբերի 24-ին Գերմանիայի Ֆեդերատիվ հանրապետությունից (այսուհետ Գերմանիա) «Է ներմուծել Մերսեդես Բենց E-200 մակնիշի ավտոմեքենա (այսուհետ՝ ավտոմեքենա): Ավտոմեքենայի առքուվաճառքի գործարքի գինը կազմել է 3.300 եվրո: Առքուվաճառքի գործարքի գումարն իր անունից բանկային փոխանցման միջոցով վճարել է վերջինիս ընկերը, ում դիմողը նախապես դրամական փոխանցումների համակարգի միջոցով փոխանցել էր գործարքի գումարը (առկա է նշված փոխանցումը Արա Մանուկյանի կողմից կատարելը հավաստող փաստաթուղթ): Ավտոմեքենան «Է փոխադրվել, այն դիմումատուի կողմից անձամբ վարելու միջոցով:

Արա Մանուկյանը ս.թ. հոկտեմբերի 24-ին դիմում է ներկայացրել «Ֆինանսների նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան (այսուհետ՝ Մաքսատուն) պետին՝ խնդրելով ավտոմեքենան մաքսազերծել գործարքի գնի մեթոդով, համաձայն «Մաքսային օրենսգրքի /այսուհետ նաև Օրենսգրքի/ 87-րդ հոդվածի: Դիմումին կից ներկայացվել են այն անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք պահանջվում են վերոնշյալ հոդվածի 1-ին մասով: Մաքսատան պետի 27.10.2014թ. գրությամբ Արա Մանուկյանի դիմումը մերժվել է անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու հիմքով: Նշված գրությամբ վերջինս տեղեկացվել է, որ իր կողմից ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշվելու է ավտոմեքենայի «Է ներքին շուկայական գնի հիման վրա:

Բողոքաբերը գտնում է, որ մաքստան պետի վերը նշված գրությունը ոչ իրավաչափ է և անհիմն, քանի որ, ի հակառակ վարչական ակտում տեղ գտած հիմնավորման, ս.թ. հոկտեմբերի 24-ին Մաքսատան պետին ուղղված դիմումին կից ներկայացված են եղել «Մաքսային օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Ավելին, Մաքսատան կողմից Արա Մանուկյանի դիմումը մերժելուց առաջ վերջինս լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ չի ներկայացվել, ուստի խախտվել է «Մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2.1 կետի պահանջները, չեն պահպանվել վարչական վարույթի իրականացման ընթացակարգային նորմերը:

Ապրանքի մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելու համար մաքսային մարմին ներկայացման ենթակա փաստաթղթերի շրջանակը նախատեսված է «Մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասով, ինչը, համաձայն նույն հոդվածի նույն մասի, հիմք է «...մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու համար»: «Մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն. «Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու համար հայտարարատուն մաքսային հայտարարագրի հետ միասին պետք է ներկայացնի՝

1) արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման փաստաթուղթը.

2) մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրության և համանման այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե ապրանքների մատակարարման պայմաններով այդպիսի ծախսերի պարտավորությունը կրում է գնորդը:

Վերոնշյալ ձևակերպումից բխում է, որ պարտադիր է միայն ապրանքի ձեռքբերման փաստաթղթի ներկայացումը, իսկ ապրանքի փոխադրման ծախսերը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու անվերապահ պարտականություն հայտարարատուն չի կրում, քանի որ ապրանքի օտարման գործարքի պայմաններից պետք է ակնհայտ լինի ապրանքի, տվյալ դեպքում դիմումատուի կողմից գնված ավտոմեքենայի փոխադրման ծախսերը վճարելու իր պարտականությունը: Արա Մանուկյանի այդ պարտականությունը, սակայն, ամենևին ակնհայտ չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին մասի ուժով առավաճառքի պայմանագրով հիմնական և պարտադիր պայման-պարտավորություն են հանդիսանում վաճառողի կողմից գնորդին համապատասխան ապրանք հանձնելը և այդ ապրանքի համար գնորդի կողմից պայմանավորված գինը վճարելը: Այսինքն, առավաճառքի գործարքի պայմաններից ակնհայտ կարող են լինել միայն կողմերի վերը նշված պարտավորությունները: Ինչ վերաբերում է այլ պարտավորություններին և մասնավորապես գնված ապրանքի փոխադրման և դրա հետ կապված ծախսերը կրելու պարտավորությանը, ապա այն պետք է նախատեսված լինի գործարքն ուղեկցող փաստաթղթերով, այդ թվում՝ կարող է նախատեսված լինի գույքի, քննարկվող դեպքում ավտոմեքենայի առքուվաճառքի պայմանագրով: Ներմուծված ավտոմեքենայի ուղեկցող որևէ փաստաթղթում ավտոմեքենայի փոխադրման և/կամ դրա ծախսերը կրելու պարտավորություն նախատեսված չէ: Այսպես, անկախ վերոգրյալից, սույնով կետ առ կետ կանդրադառնանք Օրենսգրքի 87-րդ հոդվածով ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկին.

- արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման փաստաթուղթը, կից ներկայացվում են բանկային փոխանցումների փաստաթղթեր, որոնցում հստակ երևում են ավտոմեքենայի առքուվաճառքի փաստը և գործարքի գինը, պարունակում են գործարքի կնքման ամսաթիվը, գնորդի ու վաճառողի անձնական տվյալները, ավտոմեքենայի մակնիշն ու նկարագիրը: Մասնավորապես, ավտոմեքենան ձեռք է բերվել 3.300 եվրոյով, վճարումը կատարվել է Արմեն Դավիդյանի կողմից: Գումարը Արա Մանուկյանի կողմից Արմեն Դավիդյանին ուղարկվել է 01.10.2014 թ-ին բանկային փոխանցմամբ, որի նպատակը եղել է մեքենայի համար վճարելը:

- Մինչև ՀՀ մաքսային սահմանը տեղավախելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրության և համանման այլ ծախսերը, չնայած այն հանգամանքին, որ վերը նշված փաստաթուղթը լիովին բավարարում էր Օրենսգրքի 87-րդ 1-ին մասի պահանջներին, ներկայացնում ենք նաև Օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը: Այսպես, մեքենան վարելով մինչև ՀՀ բերել է Արա Մանուկյանը, ով կրել է նաև մեքենայի տեղախոխման հետ կապված բոլոր ծախսերը: Կից ներկայացվում է Արա Մանուկյանի բանկային հաշվի քաղվածքը, անդորրագրեր, որոնցից հստակ երևում է, որ անցնելով տարբեր երկրներով՝ վերջինս պարբերաբար լիցքավորել է մեքենան:

Ավտոմեքենայի փոխադրման ծախսերը մասնակիորեն վճարվել են Արա Մանուկյանի կնոջ Աննա Մանուկյանի բանկային հաշվին եղած դրամական միջոցներով: Սույն փաստը, սակայն, որևէ կերպ չի կարող վկայել այն մասին, որ ավտոմեքենայի փոխադրման հետ կապված ծախսերը մասամբ կատարվել են այլ անձի կողմից, հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մաս:

Ի հավելումն վերոշարադրյալի կից ներկայացվում են նաև ՀՀ տարածք ավտոմեքենայի տեղափոխման հետ կապված հետևյալ փաստաթղթերը: Արա Մանուկյանի անձնագրի պատճենը տարանցիկ պետությունների սահմաններով ավտոմեքենայի փոխադրման մասին նշումներով, ինչը վկայում է ավտոմեքենան նրա կողմից վարելու միջոցով ՀՀ փոխադրելու փաստի մասին, հյուրանոցներում իր կեցության ծախսերը հավաստող անդորրագրերը, ավտոմեքենայի վառելիքի լիցքաքվորման ծախսը հիմնավորող համապատասխան անդորրագրերը, Արա Մանուկյանի բանկային հաշվի քաղվածքը ավտոմեքենայի տարանցման ընթացքում ճանապարհաճախսի նպատակով բանկային հաշվից կատարված

կանխկացումների վերաբերյալ, ավտոմեքենայի ապահովագրությունը հաստատող փաստաթղթերը և այլն:

«Մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2.1 մասի դրույթին համապատասխան Մաքսատան կողմից դիմումատուին պետք է գրավոր ներկայացվեին այն հանգամանքները, որոնք խոչընդոտում էին ավտոմեքենայի մաքսային արժեքը գործարքի գնով հաշվարկելուն, այդ թվում՝ պետք է նշվեր փաստաթղթերի այն շրջանակը, որը, մաքսային մարմնի կարծիքով, պակասում է և պետք է ներկայացվի: Ինչպես արդեն վերը նշվել է, Մաքսատան կողմից որևէ նման գրություն կամ այլ կերպ ձևակերպված գրավոր տեղեկատվություն Արա Մանուկյանին չի տրամադրվել, այլ միանգամից տրամադրվել է վերջինիս դիմումի մերժման եզրակացությունը Մաքսատան պետի անունից տրված համապատասխան գրությամբ: Այդպիսով, խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները: Ուստի, Մաքսատան վարչական ակտը կայացվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2.1 մասի խախտմամբ: Հարկ է նշել, որ համանման փաստական հանգամանքներով վարչական գործով ՀՀ վարչական դատարանը բավարարել է հայցվորի հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի («Սպորտ Թայմ ՍՊԸ» ընկերությունն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ թիվՎԴ/1657/05/09 վարչական գործ):

Ելնելով վերը ներկայացված փաստարկներից դիմումատուն խնդրում է ՀՀ ՖՆ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան 27.10.2014թ. մերժման եզրակացությունը ճանաչել անվավեր, սույն վարչական վարույթի ընթացքում կասեցնել նշված մերժման եզրակացության որպես վարչական ակտի կատարումը, բավարարել Արա Մանուկյանի 24.10.2014թ. դիմումը և վերջինիս կողմից ՀՀ ներմուծված ավտոմեքենան մաքսազերծել գործարքի գնի մեթոդով, համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Արա Մանուկյանը Գերմանիայի Ֆեդերատիվ հանրապետությունից ՀՀ տարածք է ներմուծել Մերսեդես Բենց E-200 մակնիշի ավտոմեքենա (այսուհետ նաև ավտոմեքենա): Համաձայն ավտոմեքենայի առուվաճառքի 10.10.2014 թ-ի պայմանագրի նշված մեքենան գնվել է 3.300 եվրոյով: Արա Մանուկյանը պնդում է, որ առքուվաճառքի գումարը դրամական փոխանցումների համակարգի միջոցով փոխանցել է Արմեն Դավիդյանին, որը Արա Մանուկյանի անունից բանկային փոխանցմամբ վճարել է գործարքի գումարը: Ավտոմեքենան ՀՀ տարածք է փոխադրվել Արա Մանուկյանի կողմից՝ վարելու միջոցով:

Արա Մանուկյանը ս.թ. հոկտեմբերի 24-ին դիմում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան պետին՝ խնդրելով ավտոմեքենան մաքսազերծել գործարքի գնի մեթոդով, համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի: ՀՀ ՖՆ ԱՄՄՁՄ մաքսատան 27.10.2014 թ-ի մերժման եզրակացությամբ Արա Մանուկյանի պահանջը մերժվել է:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու համար հայտարարատուն մաքսային հայտարարագրի հետ միասին պետք է ներկայացնի՝

1) արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման փաստաթուղթը, որը պետք է պարունակի փաստաթղթի տրման ամիս-ամսաթվի, հերթական համարի, վաճառողի (առաքողի), գնորդի (ստացողի), ապրանքի մանրամասն նկարագրի (անվանումը,

առկայության դեպքում՝ ապրանքային նշանը կամ առևտրային անվանումը), տեղերի/քանակի, չափի միավորի, միավոր արժեքի, քաշի, ընդհանուր արժեքի մասին տեղեկություններ, ինչպես նաև վճարման փաստաթուղթը կամ հետագա վճարման պարտավորությունը հաստատող փաստաթուղթը (երաշխիքի նամակ կամ վաճառողի և գնորդի միջև համաձայնեցված այլ փաստաթուղթ)։

2) մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրության և համանման այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե ապրանքների մատակարարման պայմաններով այդպիսի ծախսերի պարտավորությունը կրում է գնորդը»։

Քննարկվող դեպքում Արա Մանուկյանի կողմից 24.10.2014 թ-ի դիմումի հետ միասին չեն ներկայացվել ամտոմեքենայի ձեռք բերման համար կատարված բանկային փոխանցումների և մինչև ՀՀ սահման ամտոմեքենան տեղափոխելու հետ կապված կատարված ծախսերի վերաբերյալ բավարար ապացույցներ, ինչը և հիմք է հանդիսացել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով սահմանված կարգով Արա Մանուկյանի 24.10.2014 թ-ի դիմումով բերված պահանջը մերժելու համար։

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործում առկա նյութերը եկավ եզրակացության, որ առկա չեն բավարար ապացույցներ Արա Մանուկյանի կողմից ներմուծված ավտոմեքենան ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված կարգով մաքսագերծելու համար։ Մասնավորապես, բողոքին կից ներկայացված են մինչև ՀՀ սահման ավտոմեքենան տեղափոխելու ընթացքում կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, սակայն դրանց մի մասում, որպես վճարող հանդես է եկել Աննա Մանուկյանը։ Սույն գործում առկա է Աննա Մանուկյանի հայտարարությունն այն մասին, որ վերջինիս բանկային հաշիվներից Արա Մանուկյանի կողմից ավտոմեքենայի տեղափոխման հետ կապված ծախսերը կատարվել են Աննա Մանուկյանի համաձայնությամբ։ Սակայն հարկ է նշել, որ նշված հայտարարությունը Աննա Մանուկյանի կողմից տրվել է միայն 06.11.2014 թ-ին, այսինքն՝ Արա Մանուկյանի կողմից 24.10.2014 թ-ին մաքսատուն ներկայացված դիմումից հետո։ Նման պայմաններում Արա Մանուկյանի 24.10.2014 թ-ին մաքսատուն ներկայացված դիմումին կցված ապացույցների մի մասը չէր կարող վերաբերելի համարվել տվյալ դեպքին։

Բացի այդ, Արա Մանուկյանի և «Համմ-Ջյուդ Առտոմոբայլ» ՍՊԸ-ի միջև 10.10.2014 թ-ին կնքված առուվաճառքի պայմանագրի, վերջինիս կողմից 10.10.2014 թ-ին տրված հաշիվ-ապրանքագրի (ինվոյս) և միջոցների միջազգային փոխանցման վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությամբ կարելի է հանգել եզրակացության, որ չի հիմնավորվում Արա Մանուկյանի կողմից Արմեն Դավիդյանին փոխանցված 3300 եվրո գումարն ավտոմեքենայի գնման համար փոխանցված լինելու հանգամանքը։ Մասնավորապես, նախ հարկ է նշել, որ վերոգրյալ առուվաճառքի պայմանագրում, հաշիվ-ապրանքագրում (ինվոյս) Արա Մանուկյանի հասցեն նշված է ք.Երևան, Բուսաբանական 11, իսկ միջոցների միջազգային փոխանցման վերաբերյալ փաստաթղթում՝ ք.Նիցա, Ֆաբրոնի պող. 7, մշ. Բ1։ Տվյալ դեպքում հարց է առաջանում, արդյոք ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրում, հաշիվ-ապրանքագրում (ինվոյս) նշված Արա Մանուկյանը և միջոցների միջազգային փոխանցման վերաբերյալ փաստաթղթում նշված Արա Մանուկյանը, նույնանուն են, թե ոչ։

Բացի այդ, միջոցների միջազգային փոխանցման վերաբերյալ փաստաթղթի համաձայն Արա Մանուկյանը Արմեն Դավիդյանին է փոխանցել 3300 եվրո գումար և առկա չէ որևէ հիմնավոր ապացույց այն մասին, որ նշված գումարը փոխանցվել է ավտոմեքենայի ձեռքբերման համար։ Ընդ որում, թե ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը և թե հաշիվ-ապրանքագիրը (ինվոյս) կազմվել են 10.10.2014 թ-ին, սակայն միջոցների միջազգային փոխանցման վերաբերյալ փաստաթղթի համաձայն Արա Մանուկյանի կողմից 3300 եվրո գումարը Արմեն Դավիդյանին է փոխանցվել 01.10.2014 թ-ին։

Սույն գործում առկա է բանկային փոխանցման վերաբերյալ անդորրագիր, որի համաձայն Արմեն Դավիդյանը «Համմ-Ջյուդ Առտոմոբայլ» ՍՊԸ-ին է փոխանցել 3300 եվրո գումար, սակայն նշված անդորրագրում առկա չէ որևէ գրառում այն մասին, որ 3300 եվրո

գումարը փոխանցվել է Արա Մանուկյանի և «Համմ-Ջյուդ Աուտոմոբայլ» ՍՊԸ-ի միջև 10.10.2014 թ-ին կնքված առուվաճառքի պայմանագրի կամ 10.10.2014 թ-ի հաշիվ-ապրանքագրի (ինվոյս) հետ կապված:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ սույն գործում առկա չեն բավարար ապացույցներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ Արա Մանուկյան կողմից ներմուծված Մերսեդես Բենց E-200 մակնիշի ավտոմեքենան ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի դրույթների համաձայն մաքսագերծելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ ԱՄՄՁՄ մաքսատան 27.10.2014 թ-ի մերժման եզրակացությունը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

